Հաստատում եմ՝

Հայ-Ռուսական համալսարանի

Գիտության գծով պրոռեկտոր Պ.Ավետիսյան

10.10. 2025թ.

ԿԱՐԾԻՔ

(առաջատար կազմակերպության)

ԻԳ.00.02 «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանը հայցող Անահիտ Արմենի Սերոբյանի «Թուրքիայի փափուկ ուժը Վրաստանի տարածաշրջանային ինտեգրման գործընթացներում» թեմայով ատենախոսությունը պաշտպանության երաշխավորելու վերաբերյալ.

Հաստատվել է

Հայ-Ռուսական համալսարանի քաղաքագիտության ամբիոնի 2025թ.-ի հոկտեմբերի 9-ի նիստում: Նիստին մասնակցում էին փիլ. գիտ. թեկնածու, դոցենտ Հ.Լ. Մարգսյանը, քաղ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Վ.Ս. Դավթյանը, քաղ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ա.Փ. Ենգոյանը, պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ա.Ս. Մանուկյանը, իրավ. գիտ. դոկտոր, դոցենտ Ա.Ռ. Հարությունյանը, քաղ. գիտ. թեկնածու Ն.Ա. Դունամալյանը, ավագ դասախոս Մ.Լ. Հարությունյանը, ավագ դասախոս Ն.Ի. Մարգարյանը, ավագ դասախոս Ի.Ա. Քարամյանը:

Անահիտ Արմենի Սերոբյանի «Թուրքիայի փափուկ ուժը Վրաստանի տարածաշրջանային ինտեգրման գործընթացներում» թեկնածուական ատենախոսությունն արդիական և գործնական նշանակություն ունեցող ուսումնասիրություն է, քանի որ վերջին տասնամյակներին Թուրքիան զգալիորեն ակտիվացրել է իր քաղաքական, տնտեսական և մշակութային ներգրավվածությունը Հարավային Կովկասում, և Վրաստանը դարձել է այդ ակտիվ գործունեության

առանցքային կենտրոնը՝ իր ռազմավարական դիրքի և տարածաշրջանային նշանակության շնորհիվ: Թուրքական ներկայությունը Վրաստանում դրսևորվում է ինչպես պետական, այնպես էլ ոչ պետական ձևաչափերով և ընդգրկում է տարբեր ոլորտներ՝ էներգետիկայից մինչև կրթություն, ինչը ստեղծում է անհրաժեշտություն այն գիտագործնական ուսումնասիրության, որը թույլ կտա գնահատել այդ գործընթացների ազդեցությունը տարածաշրջանի քաղաքական և սոցիալ-մշակութային դաշտի վրա, և տարածաշրջանում թուրքական փափուկ ուժի դերը դեռևս քիչ ուսումնասիրված է գիտական և գործնական հետազոտություններում:

Ատենախոսությունում քննարկվել են այն գործոններն ու մեխանիզմները, որոնց էվոլյուցիան պայմանավորել է Թուրքիայի փափուկ ուժի գործիքների ներգրավվածությունը Վրաստանի քաղաքական գործընթացների, տնտեսական կողմնորոշման և անվտանգության ռազմավարության վրա: Հեղինակը վերլուծել է թուրք-վրացական փոխհարաբերությունների զարգացման առանձնահատկությունները, ընդգծել է քաղաքական, տնտեսական, էներգետիկ և մշակութային ազդեցության հիմնական գործիքակազմերը, ինչպես նաև ձևավորել է Վրաստանի տարածաշրջանային դիրքորոշման և Թուրքիայի փափուկ ուժի դերի նոր մոտեցումներ:

Բացի գիտական կարևորությունից, հետազոտությունը ունի նաև կիրառական նշանակություն, քանի որ ուսումնասիրվել են Թուրքիայի ներգրավվածության դերը և ազդեցությունը Վրաստանի տարածաշրջանային-քաղաքական գործընթացների վրա, ինչը կարևոր ազդակ է տարածաշրջանային քաղաքական կայունության և համագործակցության մեխանիզմները հասկանալու համար:

Ատենախոսը տիրապետում է ժամանակակից համեմատական և համակարգային վերլուծության մեթոդներին, որոնք կիրառվելով տարածաշրջանային քաղաքական գործընթացների ուսումնասիրության մեջ, հնարավորություն են տվել բացահայտել թուրքական գործոնի ազդեցության կառուցվածքն ու գործարկման մեխանիզմները Վրաստանի արտաքին քաղաքականության և անվտանգության ռազմավարության վրա,

իսկ հեղինակի գիտական հոդվածներում արտացոլված եզրահանգումները ընդգծում են հետազոտության տեսական հիմնավորվածությունն ու կիրառելիությունը:

Թեկնածուական ատենախոսությունը ունի որոշ գիտական և աղբյուրագիտական հիմք: Ուսումնասիրության համար օգտագործվել են Թուրքիայի փափուկ ուժի և տարածաշրջանային քաղաքական գործընթացների վերլուծության համար անհրաժեշտ գիտական ու վերլուծական նյութեր, պաշտոնական փաստաթղթեր, քաղաքական հայտարարություններ, ինչպես նաև թուրք-վրացական փոխհարաբերությունների շրջանակում քաղաքական դերակատարների ելույթների վերլուծություն:

Ատենախոսության մեջ առաջ քաշված և դրույթները կարևոր ներդրում են տարածաշրջանային հարաբերությունների և արտաքին քաղաքականության վերլուծության ոլորտում: Վրաստանի օրինակով ներկայացված վերլուծական մոդելը հնարավորություն է տալիս գնահատել արտաքին ազդեցության գործոնների կիրառման մեխանիզմները և կանխատեսել քաղաքական որոշումների արդյունավետությունը փոքր պետությունների պարագայում՝ հատկապես բազմաբևեռ մրցակցության պայմաններում:

Ատենախոսության մեջ ներկայացված եզրակացությունները հիմնավոր են և պատճառաբանված, որոնց վավերականությունը ապահովված է մեթոդաբանական ապարատի հետևողական և ճշգրիտ կիրառմամբ: Հեղինակը հաջողությամբ սահմանել է ատենախոսության արդիական նպատակը և հանգամանորեն իրականացրել առաջադրված բոլոր խնդիրները: Ատենախոսության սեղմագիրը արտացոլում է աշխատանքի հիմնական դրույթները և համապատասխանում է դրա բովանդակությանը: Անահիտ Սերոբյանի գիտական հոդվածները նույնպես ունեն ակադեմիական և կիրառական նշանակություն՝ ընդգծելով ատենախոսության հիմնական գաղափարներն ու եզրահանգումները:

Աշխատանքը, բնականաբար, զերծ չէ նաև որոշակի թերություններից.

1. Չնայած, որ աշխատության առաջին ենթագլուխը անվանվում է «Վրաց-թուրքական հարաբերությունների զարգացման տեսական ասպեկտները. փափուկ ուժի

կիրառման գործիքակազմը», ենթագլխի բովանդակությունը մեծամասամբ նվիրված է «փափուկ ուժ» հասկացության տեսական անդրադարձի, սակայն «վրաց-թուրքական հարաբերությունների» մասին նշված է միայն մեկ պարբերության մեջ (էջ 15): Համարում ենք, որ ենթագլուխը պետք է լիներ ոչ թե «վրաց-թուրքական հարաբերությունների տեսական ասպեկտների», այլ այդ հարաբերությունների **ուսումնասիրության** տեսական ասպեկտների մասին:

2. Առաջին գլուխը ավարտվում է «Վրաստանը և Թուրքիայի հարավկովկասյան քաղաքականության ռազմավարությունը» ենթագլխով, որը՝ մեր կարծիքով, նպատակահարմար կլիներ միացնել նախորդ ենթագլխին, որտեղ նկարագրվում է Թուրքիայի ընդհանուր ռազմավարությունը:
3. Առաջին գլխում առկա են որոշ սուբյեկտիվ տեսակետներ, որոնք փաստարկված չեն նախորդող բովանդակության մեջ. օր.՝ «Վրացական երազանք» կուսակցության դեմոկրատական հետընթացը արդեն իսկ լարել են հարաբերությունները հիմնական դաշնակիցների հետ» (էջ 39), «...2008 թ. օգոստոսին, երբ Ռուսաստանը ներխուժեց Վրաստան և ձգտում էր վերականգնել իր անջատողական նահանգը՝ Հարավային Օսեթիան (Օսիան)» (էջ 74):
4. Ցանկալի կլիներ, որ հեղինակը պարզաբաներ, թե ինչո՞վ է պայմանավորված Վրաստանում Թուրքիայի «փափուկ ուժի» հետազոտության համատեքստում այդքան մեծ ծավալով անդրադառնալ էներգետիկ, տրանսպորտային և առևտրային ոլորտներին (ամբողջ երկրորդ գլուխը նվիրված է այդ հարցին):
5. Տեքստում ներկայացված պատկերները (էջեր 92, 108, 126 և մասնավորապես 146) չունեն նկարագրություն ըստ պահանջված ձևի:
6. Իբրև գիտական նորույթ ներկայացվող «փափուկ ուժ» հասկացության սահմանումը սկսում է հետևյալ կերպ. « Փափուկ ուժը պետության կամ սուբյեկտի ռազմավարական կարողությունն է...»: Սահմանմանը իբրև տրամաբանական գործողության ներկայացվող գլխավոր պահանջներից է որոշակիությունը: «Սուբյեկտ» բառի կիրառումը դարձնում է այն անորոշ: Պարզ չէ, ինչ է դրա տակ հասկանում հեղինակը: Ավելին, այս ձևակերպմամբ ստացվում է, որ պետությունը փափուկ ուժի սուբյեկտ չէ:

7. Գիտական նորույթի 5-րդ, 6-րդ, և 7-րդ կետերում, որտեղ հեղինակը պնդում է, որ նորովի է լուսաբանվել, կամ ներկայացվել, կամ հիմնավորվել ինչ-որ մի բան, ցանկալի կլիներ հստակ ձևակերպել այդ «նորովի» բովանդակությունը:

ՀՌՀ քաղաքագիտության ամբիոնը՝ որպես առաջատար կազմակերպություն, գտնում է, որ վերոնշյալ թերությունները չեն նսեմացնում ատենախոսության գիտական արժեքը, և *Անահիտ Արմենի Սերոբյանի «Թուրքիայի փափուկ ուժը Վրաստանի տարածաշրջանային ինտեգրման գործընթացներում»* թեմայով ատենախոսությունը համապատասխանում է ԻԳ.00.02, **«Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ»** մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան հայցելու ատենախոսություններին առաջադրվող պահանջներին և այն երաշխավորում է հրապարակային պաշտպանության:

Հայ-Ռուսական համալսարանի
Քաղաքագիտության ամբիոնի վարիչ
փիլիսոփայական գիտությունների թեկնածու, դոցենտ Հ.Լ. Սարգսյան

Փիլիսոփայական գիտությունների թեկնածու, դոցենտ Հ.Լ. Սարգսյանի ստորագրությունը հաստատում եմ

Հայ-Ռուսական համալսարանի
Գիտական քարտուղար
Բանասիրական գիտությունների թեկնածու Ռ.Կասաբաբովա